«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

ՈՐՈՇՈՒՄ N 56

«30» 08 2020թ. Գ. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ -Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի որակի ապահովման բաժնի կանոնակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 92/1

«__31_»_____08_____2020թ.

Ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի *որակի ապահովման բաժնի կանոնակարգը:*
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ

(ստորագրություն)

Հաստատված է

«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի

201__թ. «_____» «____» N_____ հրամանով

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Գորիսի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԳՊՔ) որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ բաժին) ԳՊՔ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրությանը, ԳՊՔ կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասպխան:

1.2 Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է տնօրենի կողմից՝ ԳՊՔ-ի Կառավարման խորհրդի որոշմամբ:

1.3 Բաժնի կանոնակարգը հաստատվում է ԳՊՔ-ի Կառավարման խորհրդի կողմից:

1.4 Սույն կանոնակարգի մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են ԳՊՔ Կառավարման խորհրդի որոշմամբ:

2. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

2.1.1. ուսումնական ծրագրերի որակի ուսումնասիրում և ապահովում

2.1.2. ուսանողների ուսումնառության գնահատում և որակի ապահովում

2.1.3. դասախոսական կազմի որակի ապահովում

2.1.4. դասավանդման որակի և արդյունավետության գնահատում

2.1.5. կազմակերպված պրակտիկայի գնահատում

2.1.6. ներքին շահակիցների բավարարվածության գնահատում

2.1.7. շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն

2.1.8. ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցում

2.2. Բաժնի գործառույթներն են՝

2.2.1. յուրաքանչյուր կիսամյակ անցկացնել ներքին աուդիտ

2.2.2. իրականացնել մշտական մոնիտորինգ, այնուհետև ստացված արդյունքների հիման վրա անցկացնել ԳՊՔ-ի գործընթացների դիագնոստիկա

2.2.3. սահմանված կարգով ԳՊՔ որակի ապահովման հետ կապված այլ գործընթացների իրականացում

2.2.4. վերլուծությունների արդյունքում ստացված տվյալները ներկայացվում են ԳՊՔ Կառավարման խորհրդին, ինչպես նաև տնօրենին:

3. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Բաժինը գործում է ԳՊՔ Կառավարման խորհրդի անմիջական ենթակայությամբ՝ տնօրենի վերահսկողությամբ

3.2. Բաժինը ղեկավարում է մասնագետը, ով կազմակերպում է Բաժնի ընթացիկ աշխատանքները և պատասխանատվություն է կրում Բաժնի աշխատանքների որակի և Բաժնի խնդիրների ու գործառույթների իրականացման համար:

4. ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱՍՈՒՅԹՈՒՆՆԵՐԸ

4.1. սահմանված կարգով անցկացնել հարցումներ

4.2. ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվական նյութեր ԳՊՔ-ի ստորաբաժանումներից՝ Բաժնի աշխատանքների իրականացման համար

4.3. սահմանված կարգով հրապարակել Բաժնի տեղեկատվական նյութերը

4.4. կազմակերպել և անցկացնել Բաժնի աշխատանքնեևւ հետ կապված համապատասխան ուղղորդող միջոցառումներ և թրեյնինգներ

4.5. անհրաժեշտ դեպքում Բաժնի աշխատանքներին ներգրավել ԳՊՔ-ի համապատասխան աշխատակիցներին, կազմել համապատասխան հանձնաժողովներ: